

# ԽՄՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Էմինեան Աղքազրական Ժողովածուի» ներկայ՝ ուժեցորդ հատորը պարունակում է Հայ բարբառագիտութիւնը—ուրուագիծ և դասաւորութիւն նոր հայերէն բարբառների, նրանց սահմանը և նկարագրութիւնը՝ համաձայն իրանց բռնած տարածութեան և իրանց զլիսաւոր լեզուարանական լատիանիշների \*): Բոլոր մինչև այսօր ծանօթ բազմաթիւ հայ բարբառները աշող կերպով բաժանել է գրքի հեղինակ՝ պ. Հ. Աճառեանը, երեք մեծ խմբերի (ու մ, կը և ել). Նկարագրուած բարբառների և գաւառակեզուների թիւը հասնում է 102-ի, իսկ՝ ինչ որ պ. Աճառեանի աշխատութիւնը առանձնապէս գնահատելի է դարձնում,—այդ՝ գրքի մէջ ամեն մի բարբառից առաջ բերած օրինակները կամ նմուշներն են: Կարևոր են նոյնպէս—մատենախօսութիւնը ամեն մի բարբառի մասին և լեզուարանական բարտէսր, որ տեղաւորուած է գրքիս վերջում:

Լոյս ընծայելով այս կարևոր աշխատութիւնը՝ մենք համոզուած ենք, որ նա մեծ ծառալութիւն կը մատուցանէ ոչ միայն մասնագէտ լեզուարաններին, այլ և մեր աղգալին դրացուցներին՝ հայ բարբառագիտութեան ծեռնարկի տեղ ծառալով, ուր որ այդ առարկալին կարեւորութիւն է տրում:

Երկու տարի առաջ լոյս տեսաւ Փարիզում Classification des dialectes arméniens par Adjarian. Մեր հրատարակութիւնը՝ նախ՝ բնագիր է, որից թարգմանել է ֆռանսերէն ինքը հեղինակը, երկրորդ՝ շատ տեղերում նա աւելի մանրամասն է մշակուած, և, վերջապէս՝ երրորդ՝ նա առաջ է բերում բոլոր բարբառներից նմուշներ, որոնք պահասում են ֆռանսիական հրատարակութեան մէջ:

Այս վերջինիս լոյս տեսնելու առիթով հրատարակուեցին մասնագիտական թերթերում շատ նպաստաւոր քննադատա-

\*.) Այս աշխատութիւնը՝ աւելի համառօտ ձևով՝ նախապէս ներկայացուած էր Թիֆլիսի «Նուկասեան Մրցանակաբաշխութեան», և մերժուած էր համաձայն քննութեան, որ կատարել էր պ. Լևոն Գեանցեցեանը:

կաններ. դրանցից մենք աւելորդ չը համարեցինք մէջ բերել այս-  
տեղ երկուսը՝ իրուև ժամանակակից եւրոպական նշանաւոր լե-  
զուազէտների կարծիքներ՝ այն է պոօֆ. Մէկի և պոօֆ. Կառստին  
Ֆուանսիական հրատարակութեան մասին նրանց ասածը, ի հարկէ,  
վերաբերում է լիովին պ. Աճառեանի նոյն աշխատութեան և  
հայ բնագրին, մանաւանդ որ վերջինս երևան է դալիս ալժմ  
աւելի կատարելադորձուած ծեռով:

„Ներկայ աշխատութեան նպատակն է նոր հայերէն բարբառների դա-  
սաւորութիւնը, սահմանը և նկարագրութիւնը՝ իրանց բռնած տարածութեան  
և իրանց գլխաւոր լեզուարանական առանձնայատկութիւնների համաձայն: Նախ  
և առաջ՝ շատ յաջող կերպով բարբառները բաժանուած են երեք մեծ խմբերի.  
1. Ուժ ծիւղ, 2. Կը ծիւղ, 3. Ել ծիւղ: Այս բաժանումը ոիմնուած է սահ-  
մանական ներկայի կազմութեան վրա և յաջողապէս փոխանակում է մինչև  
ալժմ գործածուած բաժանումը (Արեւելսան և Արևմտեան հայերէն, այն է Ռու-  
սահայերէն և Տաճկահայերէն): Հեղինակը, որ հայ բարբառների վրա իր  
բազմաթիւ մենագրութիւններով գիտական աշխարհի մէջ պատուաւոր անուն  
շահած է արդէն, իր այս նոր գործի մէջ՝ առաջին անգամ լինելով՝ տալիս  
է ծիշտ գծնորով բոլոր նոր բարբառների պարզ ու ամփոփ պատկերը. Թէկ  
ուրուազդային, սակայն ծայնաբանութեան ու ծեսախօսութեան կողմից առանձին  
բարբառները բաւականաչափ բնորոշուած են, այնպէս, որ իւրաքանչիւրը բար-  
բառների ամբողջութեան մէջ տալիս է իր համայնապատկերը. Մասնաւոր  
շնորհակալութեան արժանի են նաև բարբառազիտական մատեն ագ ի տու-  
թիւնը և զրբին կցուած լեզուարանական քարտ է զը: Գիրքը, հակառակ իր  
համեստ ծաւալին, կոչուած է կարծես հիմնադիր լինել նոր հայ բարբառ-  
ների գիտութեան: Եւ երբ, ինչպէս յոյս ունինք, շուտով հայ բարբառազի-  
տութեան ընդարձակ դաշտը կը փալի իր կատարեալ ծաղկման մէջ, փոքր  
չի լինել բնաւ Ածառեանի՝ ծեռով համեստ, ուկամից զուրկ, բայց ծանապարհ  
բաց անող այս աշխատութեան արժանիքը“ \*):

\* \* \*

„Պ. Ածառեանը իր ամբողջ կեանքը նուիրել է իր մայրենի լեզուի՝  
հայերէնի գիտական ուսումնասիրութեան. ամեն տեղ ուր առիթ է ունեցել  
բնակելու, նա օգուտ է քաղել բոլոր առիթներից հաւաքելու համար բար-  
բառապին երևութերը. այսպիսով նա կարողացել է արդէն հրատարակել զա-  
նազան բարբառների մասին բազմաթիւ ուսումնասիրութիւններ, որոնք վկա-  
յում են իր դիտողական ծիրքը և լեզուարանական հմտութիւնը: Նա ունի

\*) I. Karst. Anz. 1—3 IF, XXVI, pp. 12—13,

նոլնպէս շատ անտիպ ռւսումնասիրութիւններ, որոնք պիտի հրատարակուին եթէ հայթայթուին միջոցներ: Այս աշխատութիւնը, որը ֆուանսերէն լեզուվ ներկայացնում է գիտական աշխարհին, մէկ մասնաւոր բարբառի չի վերաբերում. դա հայ բարբառների բաժանման մասին մի փորձ է: Պր. Ածառեանը միակ անծն է աշխարհում, որ կարող էր գրել մի այսպիսի գիրք. Նա անշուշտ միակն է, որ ծանօթ է նիւթի եղականապէս ցրուած մատնագիտութեան հետ. ապահովապէս նա միակն է, որ ունի անծնական դիտողութեանց այն պաշարը, որի հնտքը ամեն բուքէ երևում է այս Դասաւորութեան մէջ և առանց որոնց նա ցպիտի մտածէք գրել այս գիրքը:

Պէտք չէ սպասել թէ այստեղ առաջին անգամից կը գտնենք լեզուաբանական ծիշտ ու մանրամասն, մէկ խօսքով վերջնական աշխարհագրութիւն: Կան ամբողջ ընդարձակ գաւառներ, որոնց մասին պր. Ածառեանը չունի դեռ գրենթէ ոչ մի տեղեկութիւն. և իր գրքի արժանիքներից մէկը հէնց այն է, որ նշանակում է այն մի քանի կէտերը՝ ուր անհրաժեշտ է կատարել քննութիւններ: Գրենթէ ոչ մի տեղ, ուսումնասիրութիւնը չի գնում մինչև խորը. և գլխաւոր նկարագրութիւններից մի քանից վերաբերում են արտակենտրոն բարբառների:—Սրդէն հայերէնը չէ գրաւում մէկ անընդմիջուած տարածութիւն. նոյնիսկ կենտրոնական մասում, որ ըստ պր. Ածառեանի ընիկ հայ է, և որտեղ՝ գրքին կրուած քարտէկի համեմատ կարելի է կարծել թէ հայերէնը գլխաւոր լեզուն է, թուրքերէնը գրենթէ ամենուրեք տերող լեզուն է կամ գոնչ հայերէնի հաւասար կարեոր, մանաւանդ ալժմ Համիդեան վարչութեան կոտորածներից և մշտական ժնշումներից յետոյ: Տաճկաստանում չկայ ստոյդ վիճակագրութիւն. բայց Շուսաստանում յայտնի է, որ Թուրք և հայ ազգաբնակութիւնները հաւասարակցում են իրաք՝ հին զոտ հայկական նահանգների մէջ ամեն տեղ: Այս կենտրոնական շրջանից դուրս, Հայերը ցրուած են բազմալեզու ժողովուրդների մէջ:—Ինչ որ ալժմ կարելի էր անել, այդ է ստացուած արդիւնքները նշանակել, մատենագիտութիւնը տալ, իւրաքանչիւր գաւառական խմբերը բնորոշել և սրանով որոշ չափով սահմանագծել ապագայ քննութիւնները: Պր. Ածառեանի աշխատութիւնը կատարուած ուսումնասիրութեանց ամփոփումը չէ, այլ ամենից աւելի կատարելի քննութեանց ծրագիրը:

Առհասարակ նոր հայ բարբառները բաժանում են արևմտեան և արեւելեան. այս անկատուկ բառերի տեղ պր. Ածառեանը դնում է ում ծիւղ և կը ծիւղ աւելի յատկանշական և աւելի ծիշտ բառերը: Նա աւելացնում է նաև մի երրորդ՝ աւելի փոքր ծիւղ, որի գոյութիւնը ինքն է նկատել առաջին անգամ և որի ցուցումը միայն բաւական էր իր Դասաւորութեանը թիւնը դարձնելու իսկապէս բնորոշ մի գործ. այս է ել ծիւղը, որ բաղկացած է երկու բարբառներից Ուրմիոյ լծի շրջանում և մի բարբառից, որ խօսում է Բաթումի հարաւ-արևելքը:

Բոլոր նոր հայ բարբառները հին հայերէնի վերաբերութեամբ ներկայացնում են զուգահեռական նորմութութիւններ: Բայց թւում է թէ պահած չեն

որոշ ալնպիսի նշաններ, որոնք ցոյց տալին մեզ հին բնագրերում աւանդուած գրաբարի ժամանակակից բարբառները: Ամեն տեղ էլ հին բայական զրութիւնը քայլքայուած է և ամեն տեղ էլ վերապրում են միայն միենոյն ձևերը: Ամեն տեղ էլ գոյականների յոդնակի կազմութիւնը միենոյն սկզբունքով է, որ տարբեր է դասական հայերէնից: Պ. Ածառեանը համառուի ուրուազգել է այս նորմութիւնները իր ներածութեան մէջ. պէտք է նկատել այստեղ մի քանի ծախորդ մոռացումներ, մասնաւորապէս կրաւորականի նոր կազմութիւնը (-ուի լ): Անհնար էր, նոյնիսկ համառուակի, զծել ձևափոխութեանց պատմութիւնը: Որովհետև պատմական ուսումնասիրութիւնը դեռ նոր է սկսում. պր. Karst-ի գործը Կիլիկիոյ հայերէնի վրա՝ հիմնական աշխատութիւն է և դնում է հարցների մնագոյն մասը. բայց նա վերաբերում է միայն հայ աշխարհի մի փոքրիկ մասին: Միա շրջանների մասին, որոնցից չկան միջնադարնան բնագրեր, կարեոր է հաւաքնչ ինչ որ կարելի է գտնել ծեռագրերում. լուսանցքագրութիւններ, արտագրողների կողմից յաւելումներ և մանաւանդ արտագրողների սխալներ: Երբ կատարուի այս աշխատանքը, որ երիտասարդ հայագէտների գործն է, և երբ ունենանք բոլոր ներկայ զլխաւոր բարբառների քննութիւնը, այն ժամանակ կարելի է փոքրել կազմելու հայ լեզուի պատմութիւնը: Այս պատմութեան երեսն հանած խնդիրները առաջնակարգ նշանակութիւն ունին ընդհանուր լեզուաբանութեան համար:

Պր. Ածառեան այն մեծ արժանիքն ունի, որ ամեն կերպ աշխատում է այս ահազին գործի համար: Իր գիտական արժանիքը երկուում է իր հրատարակութեանց մէջ: Ես որ գիտեմ թէ ինչպիսի՞ կամք, պէտք է ասեմ ինչպիսի՞ հերոսութիւն ունեցաւ նա իր գիտական կրթութիւնը ծեռք քննելու համար, և թէ ինչպիսի՞ նիւթական ու բարոյական պալմանների մէջ առաջ տարա երկար տարիներ երբէք ցյոզնող յարատեսութեամբ իր քննութիւնները, որոնք քիչ քաջալերունցին, պարտք եմ համարում ասել այստեղ թէ ինչպիսի՞ հիացմունք ունիմ ես, հէ միայն իր գիտութեան, իր աշխատանքի հազուագիւտ կարողութեան, այլ և իր նկարագրի վրա<sup>ա)</sup>:

Գր. Խ.

20 Սեպտ. 1911 թ.

Սոսկուա,  
Հազարեան Հեմարան արևելեան լեզուաց.

\*) A. Meillet. Journal Asiatique, Paris 1909, mai-juin, pp. 558—560.